

9.

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**PHILOLOGY**  
**ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ**

**ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՈՐ ՀԱՅ ԲԱՐԲԱՈՒԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

**Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Բայազետի բարբառի վերաբերյալ առաջին տեղեկությունները գտնում ենք Յր. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, որտեղ այն համարվում է Երևանի (Արարատյան) բարբառի երեք ենթաբարբառներից մեկը. «Պայագիտի ենթաբարբառը՝ Տաճկահայաստանի մեջ. ասոր մեկ գաղութն է Նոր-Բայագետ քաղաքը՝ Սևանայ լճին եզերքը՝ իր շրջակայ տասը հայաբնակ գիւղերով. ասոնք են՝ Օրդակլու, Նորադուզ, Ղշլաղ, Փաշաքենդի, Քեօսա-Մահմադ, Ղուլալի, Քեարիմքենդ, Ղալիղարդաշ, Քիւզաջըղ և Բաշքենդ: Յիշեալ շրջանը բոլորովին նոյն բարբառը կը խօսի՝ ինչ որ Պայագիտի մեջ»<sup>1</sup>: Այնուհետև հեղինակը բարբառային այս միավորի համար բնութագրական է համարում հետևյալ ութ հատկանիշները. ա) երկբարբառային **ե, ո** հնչյունների, **ւն** ձայնավորի առկայություն, բ) շնչեղ ձայնեղ **բ՛, գ՛, դ՛, ձ՛, ք՛** բաղաձայնների առկայություն, գ) գրեթե առանց բացառության **հ-ի** վերածում **խ - ի, դ** ձայնավորով ավարտվող բառերի վրա որոշիչ հոդի կրկնակի հավելում /կատունը, ձիւնը/, ե) միավանկ բայերի անկատար դերբայի ձևավորումը **ոււմ** մասնիկի հավելումով՝ **գ՛ալոււմ, լւն լոււմ, տւն լոււմ**, գ) օժանդակ բայի կրկնություն դերբայից առաջ և հետո՝ **յես են ուզոււմ են**, է) վաղակատար դերբայի ձևավորում **եր** մասնիկով, ը) կրավորական և չեզոք բայերի հարակատար դերբայի կազմություն **ուկ** մասնիկով<sup>2</sup>: Յր. Աճառյանը նկատում է նաև, որ թե՛ Երևանի բարբառը, թե՛ նրա երեք ենթաբարբառները դեռ ուսումնասիրված չեն, բայց դրանցով հրատարակված են գրվածքներ, որոնք կարող են ուսումնասիրության համար առատ նյութ մատակարարել: «Պայագիտի ենթաբարբառի» համար իբրև այդպիսին նշվում է Ս. Փիլոյանի՝ 1880 թ. Թիֆլիսում լույս տեսած «Կորած Մարգարիտ» աշխատանքը<sup>3</sup>: Սակայն իրականում այդ աշխատանքը գրված է ժամանակի աշխարհաբարով, և այնտեղ Բայագետի բարբառով մի քանի բառեր կան արտահայտություններ կան ընդա-

<sup>1</sup> Յր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911, էջ 33:

<sup>2</sup> Նշվ. աշխ., էջ 44 – 45:

<sup>3</sup> Նշվ. աշխ., էջ 46 – 47:

մենը: Մինչդեռ իր աշխատության մեջ Աճառյանը «Նոր-Բայազետի ենթաբարբառով» բերում է մի պատահիկ<sup>4</sup>, որը բավականին հարազատորեն է ներկայացնում բարբառիս իրողությունները և, թերևս, Բայազետի բարբառով գրի առնված և գիտական տառադարձությամբ հրապարակված առաջին նմուշն է:

Բայազետի բարբառին անդրադարձող հաջորդ լեզվաբանը՝ Ա. Ղարիբյանը ևս այն համարում է Արարատյան բարբառի ենթաբարբառ: Ըստ նրա՝ «Արարատյան բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիս-արևելյան (Արճեշ) հատվածին, տվել է Նոր-Բայազետի ենթաբարբառը, որին պատկանում են նաև Ախտայի շրջանի մի շարք գյուղերի խոսվածքները»<sup>5</sup>: Նկատելով, որ խոսվածքները երբեմն անցումային բնույթ ունեն մի բարբառից մյուս բարբառը՝ Ա. Ղարիբյանը գտնում է, որ «Ախտայի շրջանի խոսվածքները կազմում են նույնպես անցումային օղակ Արարատյան բարբառից դեպի Բայազետի ենթաբարբառը, իսկ ինքը Բայազետի ենթաբարբառը հանդիսանում է անցումային օղակ Արարատյան բարբառից դեպի Մշո բարբառը: Այսպիսով, դժվար է լինում կատեգորիկ կերպով սահմանագծել որևէ բարբառ մեկ ուրիշից»<sup>6</sup>: Անդրադառնալով «Բայազետի ենթաբարբառի» հատկություններին՝ Ա. Ղարիբյանը Յր. Աճառյանի նկատած իրողություններին հավելում է բարբառումն ան ձայնավորի առկայությունը<sup>7</sup>: Լեզվաբանը իբրև լեզվական օրինակ բերում է Աճառյանի նմուշը՝ իր տառադարձությամբ և որոշ փոփոխություններով, որոնց արդյունքում դարիբյանական նմուշը բավականին սխալ պատկերացում է տալիս Բայազետի բարբառի մի շարք իրողությունների, մասնավորապես՝ ան ձայնավորի գործառնության ոլորտների վերաբերյալ:

Բայազետի բարբառի վերաբերյալ նոր բան չի ասվում Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց» գրքում: Նշելով, որ «Նոր Բայազետի ենթաբարբառը Արարատյան բարբառի երկու ենթաբարբառներից մեկն է, որով խոսում են Հին Բայազետ քաղաքի (Արևմտյան Հայաստան), Կաղզվան, Մակու քաղաքների և Սևանի լճի ափերին գտնվող Նոր Բայազետ քաղաքի ու նրա շրջակա 10 գյուղերի բնակիչները»<sup>8</sup>՝ հեղինակը բավարարվում է Յր. Աճառյանի հիշատակած հատկանիշները մեջբերելով:

Նախորդների համեմատությամբ Բայազետի բարբառի վերաբերյալ ավելի ընդարձակ տեղեկություններ է տալիս և առաջին անգամ բարբառիս հատկանիշները քիչ թե շատ ամբողջականորեն ներկայացնում Ռ. Բաղրամյանը իր «Հայերեն բարբառներ (Սևանա լճի ավազանի խոսվածքները)» աշխատությունում<sup>9</sup>: Գրքի 11 – 34 էջերն ընդգրկող «Բայազետի ենթաբարբառը» բաժնում հեղինակը ընդհանուր առմամբ հարազատորեն է ներկայացնում բարբառիս հնչյունաբա-

<sup>4</sup> Նշվ. աշխ., էջ 48:

<sup>5</sup> **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 219 – 220:

<sup>6</sup> Նշվ. աշխ., էջ 87:

<sup>7</sup> Նշվ. աշխ., էջ 227:

<sup>8</sup> **Ա. Գրիգորյան**, Հայ բարբառագիտության դասընթաց, 1957, էջ 224:

<sup>9</sup> **Ռ. Բաղրամյան**, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Եր., 1972, էջ 225:

նական և ձևաբանական հիմնական իրողությունները, սակայն, հասկանալի է, այս համառոտ շարադրանքը Բայազետի բարբառի ամբողջական նկարագրություն և գիտական ուսումնասիրություն համարվել չի կարող: Բացի այդ, մի շարք դեպքերում վերագրվող հատկանիշները Բայազետի բարբառին բնորոշ չեն կամ ճիշտ չեն արտացոլում իրավիճակը: Այսպես, ա) հեղինակը հնչյունական համակարգում նկատում է քմային **զյ, կյ, քյ** բաղաձայնների առկայություն<sup>10</sup>, ինչը չի համապատասխանում իրականությանը, բ) համարվում է, որ բարբառումս անձայնավորը զուրկ է հնչույթային արժեքից<sup>11</sup>, սակայն **թանլ /զցի՛ր/ - թալ /փափուկ/, թանփուկ /անասունի ոտքի հարված/ - թափուկ /թափված/, բանդ /պատնեշ/ - բանդ /բանտ/, քանր /շահ, եկամուտ/ - քար** և այս կարգի բազում այլ զուգահեռներ հակառակ են վկայում, գ) երկբարբառային **ո** հնչյունին վերագրվում է **ուէ**, երբեմն էլ՝ **ու°** հնչում<sup>12</sup>, մինչդեռ այն ունի **ուա** սերտ արտասանություն, դ) նշվում է, թե բոլոր հոլովները, սեռականից բացի, հոդ են ստանում /աշակերտը, աշակերտի, աշակերտին, աշակերտիցը, աշակերտովը/<sup>13</sup>, սակայն Բայազետի բարբառում **թե՛** սեռական, **թե՛** բացառական ու գործիական հոլովները երբեք որոշիչ հոդ չեն ստանում, ե) Ռ.Բաղրամյանը, թերևս հետևելով Զր. Աճառյանին, պնդում է, թե ներգործական բայերը հարակատար դերբայը կազմում են ոչ **ուկ**, այլ **աժ** վերջավորությամբ<sup>14</sup>, սակայն Բայազետի բարբառում բոլոր բայերի հարակատարն էլ կազմվում է **ուկ** մասնիկով /ի հավաստումն ասվածի՝ ներգործական բայի հարակատար դերբայի օրինակներ են հետևյալները. քօ **բ՛երուկ** գ՛իրքը, իմ **նըկարուկ** տուներ, ընդու **խընուկ** անրաղը/, գ) հեղինակի կարծիքով՝ Ե խոնարհման բայերից շատերը եզակի հրամայականում **իր** վերջավորությունը փոխարինում են **ա-ով**, «որով այդ բայերի հրամայական եզակին անցնում է ա խոնարհման բայերի շարքը»<sup>15</sup>, մինչդեռ **ա** - ն Ե խոնարհման ներգործական սեռի պարզ բայերի եզակի հրամայականի վերջավորությունն է Բայազետի բարբառում՝ **գ՛ըրա՛ /գրի՛ր/, ջ՛առթա՛ /ջարդի՛ր/** և այլն: Ռ. Բաղրամյանը իր գրքում հայագիտության մեջ առաջին անգամ ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում Բայազետի բարբառի՝ մի շարք բնակավայրերի խոսվածքներ ներկայացնող մնուշներ գիտական տառադարձությամբ, սակայն այս դեպքում էլ կան անճշտություններ (հատկապես՝ **է, ե, օ, ո, ան, ան** հնչյունների արտահայտման հարցում), ինչպես նաև առկա են բազում շեղումներ բարբառից (բառապաշարի և քերականական իրողությունների առումով)<sup>16</sup>: Ընդհանրապես, կատարված աշխատանքը էականորեն տուժել է նաև հեղինակի այն համոզումից, թե իբր «Նույնիսկ շրջկենտրոններից հեռու գտնվող գյուղերում մաքուր բարբառախոսներ այլևս անհնար է գտ-

<sup>10</sup> Նշվ. աշխ., էջ 13 – 14:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նշվ. աշխ., էջ 29:

<sup>14</sup> Նշվ. աշխ., էջ 31:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նշվ. աշխ., էջ 34 – 53:

նել. մի տեղ, ուր դպրոցն ու գրականությունը, մամուլը, ռադիոն ու էլեկտրականությունը կենցաղ են, ուր մուտք են գործել ավտոբուսն ու գյուղատնտեսական մեքենաները, քանու բերանն են տվել գյուղերը կղզիացնող անջրպետները, բարբառները դատապարտվել են վերացման»<sup>17</sup>: Փաստորեն, բարբառը ընկալվում է իբրև անգրագիտության, բնակավայրերի միջև հաղորդակցության սահմանափակության արդյունք, այլ ոչ թե լեզվի բնական, անբռնազբոսիկ վիճակ: Նման ընթացումն էր պատճառը, որ բարբառագետները հաճախ ձգտում էին ամեն գնով ցույց տալ բարբառների դուրսմղումը գրական լեզվի կողմից և կանխատեսում դրանց մոտակա վերացումը: Այդ պատկերացմամբ է, որ Ռ. Բաղրամյանը Հր. Աճառյանի` Բայազետի բարբառով բերված նմուշի դարիբյանական աղավաղումը համարում է նոր սերնդի խոսքի արտահայտություն<sup>18</sup>, գտնում է, որ «և հնչյունական կազմը և քերականությունն ու բառապաշարը գնալով վերափոխվում, ավելի են մոտենում գրական լեզվին»<sup>19</sup>: Ըստ նրա` իր ուսումնասիրությունները կատարելու տարիներին (1964 – 1969թթ.) և հրատարակելու ժամանակ (1972թ.) նոր սերնդի բերանում Բայազետի բարբառի **ո**, առավել ևս **ե** երկբարբառները արդեն հնչում են որպես պարզ ձայնավորներ, շնչեղ ձայնեղները վերածվել են սովորական ձայնեղների, հնչյունափոխության բազմաթիվ կանոններ արդեն վերացել են, հարակատար դերբայի **ուկ** վերջավորությունը լիովին փոխարինվել է **ած** մասնիկով, մյուս հոգնակերտները տեղի են տվել **եր**, **ներ** մասնիկներին<sup>20</sup>, **ու**մ վերջավորությամբ ներգոյականը արդեն սովորական է<sup>21</sup> և այլն:

Այժմ, երբ մենք գրում ենք այս տողերը, արդեն անցյալ է 21-րդ դարի առաջին տասնամյակը, իսկ Ռ. Բաղրամյանի նշած նոր սերունդն արդեն հին սերունդ է, և մենք փաստում ենք, որ ներկայիս ոչ հին և ոչ էլ նոր սերունդների խոսքում Ռ. Բաղրամյանի նշած փոփոխությունները տեղի չեն ունեցել: Բայազետի բարբառը այսօր էլ ներկայացնում է նույն այն վիճակը, որի մասին Ռ. Բաղրամյանը գրել է. «Մենք ուսումնասիրել ենք համեմատաբար հին կոչվող սերնդի խոսվածքը` օրենքներն ու կանոնները սահմանել ենք այդ խոսվածքի փաստերից ելնելով»<sup>22</sup>: Մենք հավաստում ենք, որ Ռ. Բաղրամյանի սահմանած օրենքներն ու կանոնները նույնությամբ գործում են և այսօր: Իհարկե, ինչպես ընդհանուր լեզուն ամբողջությամբ (նաև գրական ու խոսակցական լեզուները), այնպես էլ բարբառները շարունակ փոփոխվում ու զարգանում են: Այդ փոփոխությունները զգալի են նախ և առաջ բառապաշարում, իսկ հնչյունական ու քերականական համակարգերում տեղաշարժերը շատ ավելի դանդաղ են կատարվում:

Նկատենք նաև, որ Ռ. Բաղրամյանը հանդես է բերում իրողությունների որոշ շփոթ, երբ Բայազետի բարբառային միավորից («Բայազետի ենթաբարբառ» կոչված) անկախ և նրան զուգահեռ դիտարկում է «Նորատուսի ենթաբարբառ» բար-

<sup>17</sup> Նշվ. աշխ., էջ 3 - 4

<sup>18</sup> Նշվ. աշխ., էջ 12 – 13:

<sup>19</sup> Նշվ. աշխ., էջ 13:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նշվ. աշխ., էջ 27:

<sup>22</sup> Նշվ. աշխ., էջ 13:

բառային միավորը՝ նշելով միայն մեկ տարբերակիչ հատկանիշ. «Նորատուսի ենթաբարբառը մի շատ կարևոր հատկանիշով տարբերվում է Բայազետից կամ մայր բարբառից, այն է՝ **գ, կ, ք** բաղաձայնները բառակազմի **ան, է, ի** ձայնավորներից առաջ վեր են ածվում **ջ, ճ, չ-ի**»<sup>23</sup>: Թերևս «մայր բարբառ» ասելով հեղինակը ակնարկում է Արարատյան բարբառը, եթե նկատի ունենանք նրա հետևյալ պնդումը. «Արարատյան ու Մշո բարբառները ավելի տարածված են, քան մյուսները և իրենց մեջ բաժանվում են ենթաբարբառների՝ Բայազետի, Նորատուսի, Մակվի, Արծափի և Ալաշկերտի, Բաղեշի, Տարոնի»<sup>24</sup>:

Հայ բարբառագիտության մեջ առաջին անգամ Բայազետի բարբառային միավորը Արարատյան բարբառից անկախ, ինքնուրույն բարբառ դիտարկվեց Գ. Ջահուկյանի կողմից՝ հայ բարբառների նրա կատարած բազմահատկանիշ դասակարգման արդյունքում: Ըստ այդմ՝ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախումբը կազմում են Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Բայազետի, Աստրախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառները<sup>25</sup>:

Դիտարկումները ցույց են տալիս, որ առանձին դեպքերում Գ. Ջահուկյանի բերած տվյալները հարազատորեն չեն արտահայտում Բայազետի բարբառի իրողությունները, սակայն կարևոր է, որ առաջին անգամ այլ բարբառների շարքում բարբառս ներկայացվում է հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների ամբողջությամբ, որոշվում է բարբառի դիրքը հայ բարբառների շարքում, և Բայազետի բարբառը հստակորեն սահմանազատվում է Արարատյան բարբառից: Մասնավորապես, Գ. Ջահուկյանի բերած աղյուսակները վկայում են<sup>26</sup>, որ Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներից Բայազետի բարբառը տարբերվում է երկուսուկես տասնյակից մինչև երեք տասնյակ հատկանիշներով: Մեր դիտարկումներով՝ Արարատյան և Բայազետի բարբառային միավորները միմյանցից տարբերվում են առնվազն 37 բարբառային հատկանիշներով: Նկատենք, որ Գ. Ջահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման համաձայն՝ հնչյունաբանական և ձևաբանական 100 հատկանիշների շրջանակներում 22,5 և ավելի տարբերիչ հատկանիշների դեպքում գործ ունենք առանձին բարբառների հետ<sup>27</sup>:

Նկատենք նաև, որ հնչյունաբանական ու ձևաբանական բերված և մի շարք այլ տարբերություններն ուղեկցվում են բառապաշարային և շարահյուսական զանազանություններով, որոնք, հասկանալի է, Գ. Ջահուկյանի հարյուր հատկանիշներում ընդգրկված չեն:

Կրկին անդրադառնալով բարբառների բազմահատկանիշ դասակարգման մեթոդին՝ նկատենք, որ Գ. Ջահուկյանը կատարել է նաև 5-րդ դարի հայ բարբառ-

<sup>23</sup> Նշվ. աշխ., էջ 53:

<sup>24</sup> Նշվ. աշխ., էջ 3:

<sup>25</sup> **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, 1972, էջ 135:

<sup>26</sup> Նշվ. աշխ., էջ 51 – 119:

<sup>27</sup> **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 127:

ների բազմահատկանիշ դասակարգում<sup>28</sup>, ինչի արդյունքում լեզվաբանը այդ ժամանակներում հնարավոր հարավ-արևելյան միջբարբառի շրջանակներում արձանագրում է Կոգովիտի (Կամո [Նոր-Բայազետ~Բայազետ /Պարույնք/]), Ջուղայի, Ջահարմահալի, Մարաղայի ենթաբարբառների, Պարսկահայքի միջենթաբարբառի առկայությունը<sup>29</sup>: Եթե Գ. Ջահուկյանի դասակարգումը «գոնե մասամբ ճիշտ է արտացոլում հայոց լեզվի զարգացման հին շրջանի բարբառային տարբերությունների վիճակը»<sup>30</sup>, ապա կարող ենք արձանագրել, որ Բայազետի բարբառը իր հիմնական հատկանիշներով գալիս է մեր լեզվի գործառնության հնագույն ժամանակներից, հետևաբար չէր կարող առաջանալ Արարատյան բարբառի և Մշո բարբառի մի հատվածի խառնումով, մանավանդ որ ըստ 5-րդ դարի բարբառների՝ Ջահուկյանի ներկայացրած փոխհարաբերությունների՝ Կոգովիտի ենթաբարբառը հարավ-արևելյան միջբարբառի կազմում էր, Այրարատի միջենթաբարբառը՝ հյուսիս-արևելյան բարբառի կազմում, իսկ Տարոնի միջենթաբարբառը (Արծկե, Արճեշ, Խլաթ, Բաղեշ, Մուշ, Ալաշկերտ ևլն)՝ հարավ-կենտրոնական բարբառի կազմում<sup>31</sup>: Իհարկե, իր պատմական զարգացման ընթացքում Բայազետի բարբառը կրել է բազում փոփոխություններ, փոխազդեցությունների մեջ եղել այլ, այդ թվում նաև՝ Արարատյան և Մշո բարբառների հետ, ունեցել և հետագայում էլ ձեռք բերել ընդհանրություններ (նաև տարբերություններ) այդ բարբառների հետ, սակայն նրա բուն էությունը ոչ թե այդ երկու բարբառների հատկանիշների խառնուրդն է, այլ նախ և առաջ հատկանիշների այն խումբը, որ կազմում է իր միջուկը ի սկզբանե և նաև արդյունք է ընդհանրապես հայոց լեզվի և մասնավորապես՝ ինքնուրույն զարգացման:

Հասկանալի է, որ բարբառի զարգացման, նրանում կատարված փոփոխությունների ընթացքը դժվար դիտարկելի է՝ գրավոր աղբյուրների բացակայության կամ սակավության պատճառով: Այս առումով շատ արժեքավոր է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» շարքի 11-րդ հատորը<sup>32</sup>, որտեղ զետեղված են Նոր Բայազետի շրջանից հավաքված ազգագրական և բանահյուսական նյութեր: Փաստորեն այս գրքում ընդգրկված է Բայազետի բարբառով երբևէ գրի առնված ամենածավալուն և բազմաբնույթ նյութը (հեքիաթներ, զրույցներ, առակներ, անեկդոտներ, երգեր, առածներ, ասացվածքներ, դարձվածքներ, անեծքներ), որը նաև ուղեկցվում է բարբառային բառերի սեղմ բառարանով: Այդ նյութն ուշագրավ է և ժամանակի առումով. արտահայտում է 20-րդ դարի առաջին կեսի պատկերը<sup>33</sup>, որի համեմատությունը բարբառիս ներկա վիճակի հետ որոշակի գաղափար կտա մոտավորապես 7 - 8 և գուցե ավելի տասնամյակների ընթացքում բարբառում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Պետք է նշել, սակայն, որ նյութը առավել արժեքավոր է բառապաշարի և քերականա-

<sup>28</sup> Նշվ. աշխ., էջ 180 – 192:

<sup>29</sup> Նշվ. աշխ., էջ 185:

<sup>30</sup> Նշվ. աշխ., էջ 189:

<sup>31</sup> Նշվ. աշխ., էջ 185-186:

<sup>32</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, 11, Երևան, 1980, էջ 166:

<sup>33</sup> Նշվ. աշխ., էջ 7:

կան իրողությունների առումով, իսկ հնչյունաբանական առումով լիակատար պատկերը չի արտացոլում՝ գիտական տառադարձության մասնակի կիրառության պատճառով:

Տողերիս հեղինակի «Քննվա խնննք - չնննք (Զվարճապատումներ Բայազետի բարբառով)»<sup>34</sup> գրքում տրվում է Բայազետի բարբառի համառոտ բնութագիրը, հայ իրականության մեջ առաջին անգամ գիտական ճշգրիտ տառադարձությամբ բարբառակրի կողմից ներկայացվում է բարբառիս արդի վիճակն արտացոլող զգալի նյութ:

#### **БАЯЗЕТСКИЙ ДИАЛЕКТ В ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИЧЕСКОЙ МЫСЛИ**

***В. Л. Катвалян***

Баязетский диалект - одна из диалектных единиц, не подвергнутых тщательному и обстоятельному монографическому исследованию в армянской диалектологии. Он изначально считался поддиалектом араратского диалекта, затем стал рассматриваться как самостоятельный диалект в результате многопризнаковой классификации армянских диалектов. Не все наблюдения объективно представляют существующие реалии.

#### **BAYAZET DIALECT EVALUATION BY ARMENIAN DIALECTOLOGY**

***V. L. Katvalyan***

Bayazet dialect is one of the dialects that isn't deeply and thoroughly examined by Armenian dialectology. At first it was a sub-dialect of Ararat dialect, later, in the result of the classification of various dialects, it was considered an independent dialect. However, this observation doesn't show all the facts.

---

<sup>34</sup> **Վ. Կատվալյան.** «Քննվա խնննք - չնննք (Զվարճապատումներ Բայազետի բարբառով)», Եր, 2009, էջ 232: